ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.12.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/308

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ինոթեք» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Մանուկյանի (պետական ռեգիստրի վկայականի գրանցման համար թիվ 286.110.1142186),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.11.2021թ. թիվ 26/26-1/18829-2021 գրությամբ «Ինոթեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 11.11.2021թ. թիվ

Ե/ՎՈՒ/2243-21 գրության հիման վրա, 18.11.2021թ. թիվ 26/26-1/18829-2021 գրությամբ նախաձեռնել է «Ինոթեք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ինոթեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ինոթեք» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.11.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.11.2021թ թիվ 26/26-1/18829-2021 գրությամբ նախաձեռնել է «Ինոթեք» ՍՊԸ–ին (այսուհետ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, որի հետ կապված հայտնում ենք հետեւյալը.

Ընկերությունը մասնակցել է էլեկտրոնային աճուրդ՝ թիվ ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/133 գնման ընթացակարգին, որի շրջանակներում կայքում լրացված այնուհետեւ կայքի միջոցով ձեւավորված և բեռնված դիմում-հայտարարությունը էլեկտրոնային ստորգարումից հետո թյուրիմացաբար բեռնվել է այլ մրցույթի մասնակցության դիմում հայտարարություն:

Էլեկտրոնային աճուրդի ավարտից հետո, կազմակերպչի կողմից արձանագրվել էր սխալները և էլեկտրոնային աճուրդների eauction.armeps.am համակարգի միջոցով տեղեկացվել էր մեզ թերությունների մասին և հնարավորություն ընձեռնվել դրանք շտկել և շտկված փաստաթղթերը ներկայացնել նույն eauction.armeps.am համակարգի միջոցով:

Ընկերությունը, eauction.armeps.am համակարգի միջոցով վերբեռնման բազմաթիվ անհաջող փորձերից հետո, համակարգով ստեղծած ու ստորգրած ճիշտ դիմում հայտարարությունն ուղարկեց վերընշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին: Սակայն eauction.armeps.am համակարգում, Ընկերության ռուսերեն անվանման դաշտում ի սկզբանե լրացված էր նույնն հայերեն անվանումը, որն էլ ծրագրային լրացվել էր դիմում–հայտարարության մասնակցի ռուսերեն անվանումը դաշտում հայերեն տարբերակով:

Սա վերստին մեր կողմից մատնվել էր անուշադրության և չէր շտկվել ճշգրտման ժամանակ:

Ինոթեք ՍՊԸ–ն չունի մեծ շրջանառություն և յուրաքանչյուր մրցույթային գործընթացում որևէ չափաբաժնի գծով շահելն Ընկերության համար նշանակալի դեր ունի այդ

ապրանքների մատակարարումից չհրաժարվելու համար: Այս պահին մենք բացահայտել ենք մեր կողմից թույլ տրված թերությունները հետագայում դրանք չկրկնելու համար: Միևնույն ժամանակ խորապես զղջում ենք կազմակերպչի վերընշված գործընթացի համապատասխան չափաբաժինների գնման կազմակերպումը խոչընդոտելու համար:

Վկայակոչելով վերոգրյալը խնդրում ենք չընգրկել Ինոթեք ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Ինոթեք» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/308 ընթացակարգի շրջանակներում 25.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.11.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/2243-21 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ-ի նոյեմբերի 2-10-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի է ունեցել համակարգչային տեխնիկայի և հարակից սարքերի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/133 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«ԻՆՈԹԵՔ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02830182, հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Կողբացի 42, բն 94, հեռ.՝ +37491401499; էլ. փոստի հասցե՝ ceo.inotech@gmail.com) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Ինոթեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիում-հայտարարության փաստաթղթում նշված ընթացակարգի ծածկագիրը, Պատվիրատուի անվանումը սխալ են նշված, միաժամանակ՝ նշված չափաբաժինների համարները չեն համապատասխանում փաստացի գնային առաջարկ ներկայացված չափաբաժինների համարներին, ինչպես նաև՝ բացակայում է մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը, միաժամանակ՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում նշված ընթացակարգի ծածկագիրը սխալ է և չի համապատասխանում սույն գնման ընթացակարգի ծածկագրին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 04.11.2021թ.-ին eAuction համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «ԻՆՈՐԵՔ» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և https://eauction.armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնել շտկված փաստաթղթերը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԻՆՈՐԵՔ» ՍՊԸ-ի կողմից 08.11.2021թ.-ի դրությամբ և https://eauction.armeps.am համակարգի միջոցով շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԻՆՈՐԵՔ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «ԻՆՈՐԵՔ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/308 ընթացակարգի շրջանակներում 25.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/308 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/308 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և հարակից սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/133» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու

նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ինոթեք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.11.2021թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Ինոթեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթղթում նշված ընթացակարգի ծածկագիրը, Պատվիրատուի անվանումը սխալ են նշված, միաժամանակ՝ նշված չափաբաժինների համարները չեն համապատասխանում փաստացի գնային առաջարկ ներկայացված չափաբաժինների համարներին, ինչպես նաև՝ բացակայում է մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը: Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում նշված ընթացակարգի ծածկագիրը սխալ է և չի համապատասխանում սույն գնման ընթացակարգի ծածկագրին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով 04.11.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.11.2021թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Ինոթեք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետներում և կարգով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.11.2021թ. թիվ 26/26-1/18829-2021 գրությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 11.11.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/2243-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ

ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

<u>Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը,</u> ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: ***<u>Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում,</u>*** ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի

ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Այսպես, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և հարակից սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/133» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ինոթեք» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.11.2021թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Ինոթեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթղթում նշված ընթացակարգի ծածկագիրը, Պատվիրատուի անվանումը սխալ են նշված, միաժամանակ՝ նշված չափաբաժինների համարները չեն համապատասխանում փաստացի գնային առաջարկ ներկայացված չափաբաժինների համարներին, ինչպես նաև՝ բացակայում է մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը: Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում նշված ընթացակարգի ծածկագիրը սխալ է և չի համապատասխանում սույն գնման ընթացակարգի ծածկագրին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով 04.11.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.11.2021թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Ինոթեք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետներում և կարգով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

«Ինոթեք» ՍՊԸ-ն ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ Ընկերությունը, eauction.armeps.am համակարգի միջոցով վերբեռնման բազմաթիվ անհաջող փորձերից հետո, համակարգով ստեղծած ու ստորագրած ճիշտ դիմում հայտարարությունն ուղարկել

է վերը նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին:

Ընկերության կողմից վկայակոչված փաստական հանգամանքը պարզելու նպատակով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը eauction.armeps.am համակարգը սպասարկող կազմակերպությանը՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին ուղղված 03.12.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/19870-2021 գրությամբ խնդրել է սեղմ ժամկետում հայտնել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1. Ե՞րբ է Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը,

2. Արդյո՞ք 04.11.2021թ.-08.11.2021թ. արձանագրվել է համակարգի աշխատանքի խափանում:

Ի պատասխան վերը շարադրված գրության՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Հարգելի՛ պարոն Ներսիսյան, ի պատասխան Ձեր 06.12.2021թ. թվականի թիվ ՍՑ-ՆԳ-2021/308 գրության տեղեկացնում ենք, որ մեր կողմից ուսումնասիրվել է eauction.armeps.am համակարգի տվյալների շտեմարանը: «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/133» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում ***«Ինոթեք» ՍՊԸ-ին պատվիրատուի կողմից ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում 04.11.2021թ. 16:56:32:***

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 04.11.2021թ.-08.11.2021թ. համակարգի աշխատանքի խափանում չի արձանագրվել»:

Այսինքն՝ Ընկերության կողմից վկայակոչված անհամապատասխանությունը չշտկելու հիմնավորումը, այն է՝ eauction.armeps.am համակարգի միջոցով վերբեռնման բազմաթիվ անհաջող փորձերը համակարգի խափանման պատճառով, անհիմն է:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից որպես շտկում armeps@epromotion.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված փաստաթղթերին, ապա հարկ եմ համարում հայտնել, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.11-րդ կետը հստակ սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցն արձանագրված անհամապատասխանությունը շտկում է համակարգի միջոցով, հակառակ դեպքում վերջինիս հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված

ժամկետում անհամապատասխանությունը չի շտկել, այսինքն՝ «Ինոթեք» ՍՊԸ-ն «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/133» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.11.2021թ. թիվ 26/26-1/18829-2021 գրությամբ «Ինոթեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ինոթեք» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**